ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.4. Արևելյան Եվրոպա: Տնտեսությունը

• • •

Քիմիական արդյունաբերությունը հենվում է տեղական բազմատեսակ հումքի (քարաղ, կալիումական աղեր, ածուխ, բնական գազ) բազայի վրա: Բազմազան է նաև արտադրանքի տեսականին՝ պլաստմասա, սինթետիկ կաուչուկ, լաքեր, ներկեր, պարարտանյութ, դեղորայք, օծանելիք: Ճյուղի արտադրանքով առաջատար են Ուկրաինան, Լեհաստանը, Բելառուսը, Բուլղարիան, Չեխիան, Հունգարիան: Դեղորայքի արտադրությամբ (օրինակ՝ «Նոշպա») առաջատարը Հունգարիան է:

• • •

Տարածքի զգալի մասի հարթավայրային լինելը (կեսից ավելին ոչ մեծ բարձրության հարթավայրեր են), վարելահողերի տարածվածությունը, համեմատաբար մեղմ կլիման և այլն ևս նպաստել են գյուղատնտեսության զարգացմանը: Տարածաշրջանի հյուսիսը մասնագիտանում է բարեխառն գոտու մշակաբուսերի՝ կարտոֆիլի, վուշի, շաքարի ճակնդեղի, տարեկանի մշակությամբ: Հարավում գլխավոր մշակաբույսերն են ցորենը, եգիպտացորենը, ձիթատուները, պտղատուները, խաղողը, ծխախոտը, եթերայուղատուները, բանջարեղենը:

• • •

Զբոսաշրջությունը առավելապես զարգացած է Չեխիայում, Բուլղարիայում և Ռումինիայի ծովափնյա քաղաքներում: Այդ երկրներում զբոսաշրջությունը տնտեսության մասնագիտացված ճյուղ է:

• • •

Պատմամշակութային հուշարձաններով և միջազգային զբոսաշրջութ-

յան հիասքանչ տեսարժան վայրերով հայտնի են Պրահան, Բուդապեշտը, Կրակովը: Հանգստի և զբոսաշրջության հայտնի շրջան է նաև Բալատոն լճի մերձափնյա գոտին Հունգարիայում:

• • •

Արդյունաբերությունը բավական դինամիկ զարգացող ճյուղ է, և երկրների մի մասում այն առաջատար է: ***Վառելիքաէներգետիկ համալիրի*** հիմքը ածխարդյունաբերությունն է: Քարածխի դերը մեծ է Ուկրաինայում, Լեհաստանում և Սլովակիայում: Տարածաշրջանին է բաժին ընկնում գորշ ածխի համաշխարհային հանույթի 1/3-ը: Նավթի և գազի հանույթով առանձնանում է Ռումինիան: ***Էլեկտրաէներգիայի*** գերակշիռ մասը արտադրում են ջերմաէլեկտրակայանները (ջէկ), փոքր մասը՝ ջրաէլեկտրակայանները (ջրէկ) և ատոմային էլեկտրակայանները (աէկ):

• • •

Սակայն այս երկրները առևտրական մեծ նավատորմ չունեն: Տարածաշրջանում մեծ է նաև երկաթուղային, ավտոմոբիլային և խողովակաշարային տրանսպորտի դերը: Ուկրաինայի Իլյեչևսկ և Բուլղարիայի Բուրգաս քաղաքների միջև գործում է լաստանավային երթևեկություն:

• • •

Սև մետաղաձուլությունը: Միայն Ուկրաինան ունի բավարար հումքային բազա և վառելիքի ու երկաթաքարի բավականին մոտ տեղաբաշխվածություն: Ձևավորվել են Դոնեց Մերձդնեպրյան (Ուկրաինա), Վերին Սիլեզիայի և Օստրավայի (Չեխիա) մետաղաձուլական համալիրները: ***Գունավոր մետաղաձուլությունը*** բազմաճյուղ է (պղինձ, ցինկ, կապար, ալյումին, սնդիկ, հազվագյուտ մետաղներ): Պղնձաձուլությամբ առաջատարը Լեհաստանն է, ալյումինաձուլությամբ՝ Հունգարիան, բազմամետաղներով՝ Բուլղարիան և Ռումինիան:

• • •

Արևելյան Եվրոպան հայտնի է իբրև ***հանգստի և զբոսաշրջության զարգացած տարածաշրջան,*** բայց զբոսաշրջիկների թվով այն զիջում է Եվրոպայի մյուս տարածաշրջաններին: Բուլղարիայում հայտնի է Վառնա քաղաքը՝ «Ձլատնի պյասիցի» (Ոսկե ավազներ) լողափերով:

• • •

Վերջին տասնամյակներում էապես փոխվել է տարածաշրջանի ***արտա-քին տնտեսական կապերի աշխարհագրությունը***: Այն երկրները որոնք դարձել են Եվրամիության անդամ, քիչ չափով են պահպանել կապերը ՌԴ և ԱՊՀ անդամ մյուս երկրների հետ: Բայց դրա փոխարեն խիստ մեծացել են նրանց կապերը Եվրոպայի մյուս տարածաշրջանների ու աշխարհի զար-գացած երկրների հետ: